


ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
1912—1920 թթ. ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ)



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
№ 659

(ՍՏԱՑՈՒԱԾ) 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1912 Թ.

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ

Հայրական հոգածութիւնն, որով Ձեր Վեհափառութիւնն իր հեռագրով հրամայած էր մեզ տեղեկութիւն հաղորդել փութով Հայաստանի մերազնեից վիճակին վրայ, շնորհապարտ թողոց զմեզ և միանգամայն սրտապնդեց, յոյս ներշնչելով որ կարելի պիտի լինի ուր ուրեմն Ձեր աղօթից և օծանդակութեան շնորհիւ հնարել դարմանն ա՛յն չարեաց, որ կ'սպառնան մեր ազգային էութեան: Կ'սպասէինք ազգովին և լի յուսով որ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետքը, որ քանդեց հայոց արեամբ ողողուած բռնապետական նախորդ դրութիւնը, այլևս վերջ գտնեն այդ անլուր չարիքները, սակայն ցաօք սրտի կը հարկատրուինք հաստատելու որ իրաց վիճակը հայոց նկատմամբ որևէ նպաստաւոր փոփոխութիւն չ'կրեց, և Ատանայի ահաւոր կոտորածով սկսաւ ա՛յնպիսի նոր շրջան մը, ուր անպակաս եղան ամենուրեք նորանոր չարագործութիւնք, որոց ի մասնաւորի թատր դարձան վերջերս Վանայ, Աղթամարայ, Բաղէշի, Մշոյ և Սղերտի վիճակները: Նոր ի նորոյ հասած հեռագրեր գումեցին սպաննութեանց, աւարառութեանց, առևանգումներու դէպքեր, և բռնազբօսիկ իսլամացումներ, նոյնիսկ անչափահասներու, որք տեղական իշխանութեան պաշտօնէից աչքին առջև և անոնց անտարբերութեան, չ'ըսենք գաղտնի համամտութեան կամ մեղսակցութեան շնորհիւ ի գործ կը դրուին մերազնեից դէմ, որ անգէն ու անպաշտպան կը գտնուին խուժողոյս ու զինեալ խուժանին առջև, խաղալիք թողուած անոր մոլեռանդական վայրագ կրից, որ դեռ ծարաւն ունի իր երբեմնի կոտորածներուն և աւարները շարունակելու, և կ'սպառնայ սպառսպոտ չքացնելու հայ ժողովուրդը, եթէ անմիջական ու իրական միջոցներ ի գործ չ'դրուին պաշտպանելու համար զայն:

Քանի, քանի անգամներ Բ. Դրան ուշադրութեան և տնօրէնութեան ներկայացուած էր արդէն՝ հայաքնակ նահանգներու ողբալի վիճակը, քանի քանի թագրի մատուցուած են Բ. Դրան, թէ՛ հողային գրամանց խնդրոյն կարգադրութեան համար, որ երկրագործ ժողովուրդը զրկած է իր ապրուստի միջոցէն, և թէ՛ այլազան հարստահարութեանց վերջ տրուելու խնդրա-

նօք, և խոստումներ ընդունուած, որպիսիք են՝ Լիազօր Հանձնաժողով կարգել, ամէն ինչ ի տեղւոյ քննելու և ի գործ դնելու համար արդարութիւնը, զինուորական զօրութիւն ղրկել՝ զսպելու համար չարագործներու ոհմակը, բայց այս խոստումաց և ոչ մին գործարարուեցաւ, մինչև որ իրերն եկան հասան ներկայ դատնագին վիճակին, ուր հարկադրուեցանք վարչական պատգամաւորութեան մը հետ դիմել Տէրութեան բոլոր նախարարաց, պարզել իրաց վիճակն, և այս անգամ դատնացած հոգով ու ճարահատ, բռուն կերպով բողոք բառնալ ա՛յն չարագործութեանց մասին, որ նոյն իսկ սահմանադրական կառավարութեան մ'օրով ի գործ կը դրոյին բազմաշարժար ժողովուրդի մը դէմ, որու բաժին եղած է միշտ տառապիլ իր հայրենի հողին վրայ, և սակայն ընդհանուր երկրին զարգացման ու քաղաքակրթութեան մէկ զօրեղ ազդակն եղած է, կատարելով իր քաղաքացիի ամէն պարտականութիւններն, և միշտ այս Տէրութեան բարգաւաճման ու զօրութեան մէջ փնտռելով իր օգուտը: Ըստ սովորականին դարձեալ խոստումներ եղան ազդու հրամաններ ուղղելու գաւառական իշխանութեանց, պատժելու և զսպելու չարագործները՝ հրամաններ՝ գորս փութացինք հաղորդել մեր Առաջնորդարաններուն և սակայն ի պատախաճ Մուշէն, Բաղէշէն և Սղերտէն գուժաբեր հեռագրեր հասան մեզ նոր ի նորոյ, ծանուցանող թէ ո՛չ մէկ գործարարութիւն տեղի չէ՝ ունեցած, թէ՛ վիճակն կը շարունակէ և թէ՛ ժողովուրդը մատնուած է նոյնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին:

Ահաւասիկ, Վեհափառ Ս. Հայրապետ, այս է Թուրքիոյ Ձեր հօտին վիճակը, յարատև կեղեքում, անվերջ և անասելի տառապանք, անմեկնելի անտարբերութիւն կառավարութեան կողմէ, յուզմունք ազգին մէջ, արտասահմանի ազգայիններու կողմէ ալ բողոք և առաջարկ, դիմելու ուր որ անկ է և հասկցնելու մեր վիճակը, լսելի ընել տալու մեր աղերսը և դարման մը ձեռք բերելու համար:

Ձեր Վեհափառութեան հրամանին համաձայն պարզելով իրաց այս վիճակը, նախ պարտաւոր կ'զգանք զմեզ Ձեր Վեհափառութեան յայտնելու թէ ինչպէս մեր նախորդներն, նոյնպէս և մենք չենք թերացած կատարելու մեր պարտականութիւնը և հետապնդելու, կենաց, ընչից և պատուոյ ապահովութիւն հաստատել տալու համար հայաբնակ նահանգաց մէջ, և յետոյ ըստ որում մեր ձեռք առած միջոցներն այլևս ապահովութիւն չեն ազդեր մեզ փափաքուած արդիւնքը յառաջ բերելու, ըստ որում Ձեր Վեհափառութիւնն իբր Հայր Հասարակաց՝ կը պահանջէ մեզմէ իր հօտին անդորրութիւնն ու ապահովութիւնն, և ըստ որում իր բարձր դիրքով և պաշտօնական յարաբերութեանց դիրքութեամբ և ընդհանուր կացութեան գիտակցութեամբ ի վիճակի կը գտնուի մեզ տալու կարևոր հրահանգներն, կը խնդրենք որ շնորհ բերէք մեզ հաղորդել Ձեր խորհուրդն, որով կարելի պիտի լինի որոշել ա՛յն ուղղութիւնն, որու հետևիլ բանաւոր և գործնական կրնայ լինիլ և սատարել իրաց ելք մը գտնելու, որով և փրկելու զմեզ թէ՛ ազգին և թէ՛ Ձեր Վեհափառութեան առջև պատախաճատու մնալու դժբախտ հարկէն, և նոյն իսկ խղճի խաթէ, զոր կ'զգանք հանապազօր, տեսնելով Թուրքիոյ Ձեր հոգևոր հօտին տառապանքն, անոր անէացման համար ի գործ դրուած **անողորմելի ծրագիրը** (ընդգծումը՝ խմբ.), և մեր աղերսներուն և բողոքներուն ապարդիւն մնալը:

Այն ունելով, ուրեմն, Վեհափառ Ս. Հայրապետ, ստանալ Ձեր Վեհափառութեան հրահանգներն, կը մատուցանենք գաւառներէ վերջերս հասած

հեռագրերուն և Բ. Դրան մատուցուած քանի մը թագրիրներու հայերէն թարգմանութիւնը և կը խոնարհինք ի համբոյր Ս. Աջոյն հասարակաց հօրդ հոգևորի:


Մնամք խոնարհ որդի Ձեր Վեհափառութեան

ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԷԻՈՅ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԷԵՊՍ. ԱՐՇԱՐՈՒՆԻ

4 սեպտեմբեր 1912

Դ. 15, թ. 31—33





Մասնատր (ստանձնարար)

26 Սեպտ. 1912 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՅՐ Ի ԲՐԻՍՏՈՍ

Հեռագրական տեղեկությունները չափազանց ցաւալի կերպով են ակարագրում մեր ժողովրդի վիճակը Տաճկա-Հայաստանում: Ձեր Ամենապատուութեան սեպտեմբեր 4 թուակիր գրութիւնը ներփակեալ թաքրիրով հաստատում է նոյնը, որ մե՛ծ վիշտ և կսկիծ պատճառեց մեզ, Ս. Էջմիածնի միաբանութեան և Կովկասահայ ժողովրդին: Այս առթիւ ստացել ենք Ռուսաստանի զանազան քաղաքներից, նոյնպէս Ամերիկայի և Եգիպտոսի հայերից ցաւակցական հեռագիրներ, որոնք բոլորն էլ օգնութիւն են հայցում, խնդրելով մեր միջնորդութիւնը: Ինչ որ մեր Հայրապետական պարտքը թելադրում է տանջանքների ու հարստահարութեանց առաջն առնելու համար, մենք անշեղ կ'կատարենք յօգուտ մեր սիրելի զաւակների: **Այս կողմից միանգամայն աներկբայ եղէք:**

Քաղաքական այսպիսի բարդ և խառն պայմաններում, Ամենապատիւ եղբայր, զգուշութեամբ և հեռատեսութեամբ քայլեր անելը գործի յաջողութեան կէսն է: «Ինչպէս լրագիրներից տեղեկանում ենք, Տաճկաց կառավարութիւնը սխալ ենթադրութիւն է անում, որպէս թէ Տաճկաստանի հայերը դիմում են օգնութեան օտար պետութեանց, յոյսներն իսպառ կտրելով Տաճիկ կառավարութիւնից: Այդ սխալ ենթադրութեան իբրև հիմք, հաւանական է, ծառայել է այն հանգամանքը, որ Երտաասահմանեան հայերը լցուած արդար ցաւումով, յուզումով իրենց եղբայրների և քոյրերի վրայ գործած սոսկալի տանջանքների պատճառով, դիմել են մի քանի տեղերից Բերլինի վեհա-ժողովի 61-րդ յօդուածի հիման վրայ երոպական մեծ պետութեանց, աղերսելով, որ հայաքնակ գաւառներում մտցնել տան բազմիցս խոստացուած բարեփոխումներ, որպէսզի հայի կեանքը, պատիւն ու գոյքը ապահով լինի: Ընդհանրապէս պէտք է աշխատել հասկացնել Տաճիկ կառավարութեան բարձրաստիճան ներկայացուցիչներին, նախարարներին, որ Դուք և Տաճ-

կատարում ապրող հայերը պատասխանատու չեն այն քայլերի և դիմումների համար, որ արտասահմանի հայերը ինքնաբերաբար կատարում են: Անշուշտ հայերը գոհ և ուրախ կ'լինեն, եթե Տաճկաց կառավարության անդերկայացուցիչները, ըմբռնելով իրենց երկրի շահն ու պետության բարգաւաճման խնդիրը, կարողանային կարգ ու կանոն մտցնել գաւառներում, վերջ դնել քրդական խռովությանը ու կառավարական պաշտօնեաների յանցաւոր անտարբերության և հայ ժողովրդի պատիւը, կեանքն ու գոյքը միանգամայն ապահովել և օրէնքի ու արդարադատութեան առաջ հայերին ևս հաւասար ճանաչել, որ, դժբախտաբար, ցարդ չենք տեսնում:

Լիալոյս ենք, որ Դուք, Ամենապատիւ եղբայր, և Ձեզ գործակցողներն այժմեան պատասխանատու քաղաքական պայմաններում կ'վարուէք հեռատեսութեամբ, անարդարութեանց և հայ ժողովրդի կրած տանջանաց դէմ բողոքելով օրինական ճանապարհով, մինչև որ Աստուծոյ այցելութիւնը հասնի հայ բազմաշարշար ազգին:

Հաճեցէք միշտ պարբերաբար տեղեկութիւններ տալ մեզ մեր ժողովրդի որոշեան և Ձեր սրած քայլերի մասին, ուղարկելով կառավարութեան անդերկայացրած Ձեր գրութիւնների և թաքրիրների պատճէնները:

Ի նկատի ունենալով, որ թաքրիրների մէջ գործ են ածում մահմեդական իրաւունքին յատուկ իրաւաբանական համկացողութիւններ և բառեր, բարեհաճեցէք ուղարկել հայերէն լեզուով գրած թաքրիրների հետ նաև ֆրանսերէն թարգմանութիւն, որոնք 1911 թ. փետր. 14-ից լետոյ անդերկայացրել էք և այսուհետև անդերկայացնելու էք Տաճկաց կառավարութեան:

Որպէս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս և պետ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, անհրաժեշտ քայլեր կատարում ենք դրժբախտ զաւակներին անտանելի վիճակը թեթեւացնելու համար:

Այս ամենը Ձեզ յայտնում ենք առանձնաբար: Աղօթեցէք գործի յաջողութեան համար: Մտղթում ենք հայ ազգի երջանկութեան, մեր տանջուող զաւակների փրկութեան և Ձեր ամենիդ գործունէութեան յաջողութեան համար:

ՍՏՈՐԱԳՐ. ԳԵՒՈՐԳ Ե

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 սեպտեմբերի 1912 թ.,

Ս. Էջմիածին





18 հոկտեմբերի 1912 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Ե.-Ի


Ազգընտիր Հովապետ,
Թրքական լծի տակ ընկած հայ աշխարհները նորէն արիւնոտում են:
Մեր վերջին յոյս՝ «Օսմանեան Սահմանադրութիւնը» կարգ և արդա-
րութիւն չբերեց, բարբարոսութիւնը զինաթափ չարեց և մեզ ինքնապաշտ-
պանութեան հնարաւորութիւնից զրկեց այնպէս, որ այլևս չունենք ոչ մի
սպասելիք «կիսալուսնից»:

Աստուածային նախախնամութիւնը Ռուսիոյ Մեծագոր կայսրների ար-
քայական տիտղոսների փառաւոր շարքի մէջ, իր անհաս կամքը դնելով
ման «Վեհապետ հայ աշխարհների» տիտղոսը, հետն ամբաժան դրել և
հաւատատել է ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՆԻԿՈԼԱՅ Բ-Ի ՕԳՈՍ-
ՏԱՓԱՌ ԱՆՁԻՆ ՄԷԶ «Հայ աշխարհների Վեհապետին»:

Արդ՝ հասել է ժամը, ով Ազգընտիր և կայսերահաստատ Հովապետ
Հայկական տոհմի, փութա, տար և սփոիր Քրիստոնէաների Աւանդական
պաշտպան Ռուսիոյ կայսեր և նորա Օգոստափառ անձին մէջ ապրող «Հայ
աշխարհների Վեհապետին» առաջ մեր անասան հաւատարիմ հպատա-
կութեան զգացմունքների հետ միասին և մեր սրտագին աղաչանքն ու պա-
ղատանքը՝ ուշադրութեան առնելու «Հայ աշխարհները» մրկող կրակն ու
բոցը, «Հայ աշխարհները» մաշող սուրն ու թուրը և, պաշտպան հանդի-
սանալով իր «Հայ աշխարհներին» արդար կարգի և օրէնքի տակ հնազան-
դեցնելու Քրիստոնէութեան և հայի թշնամի՝ խաւարի ու բռնութեան զա-
ւակներին:

18 հոկտ. 1912 թ. Բաթում:

Հիմք ՊՊԿԱ, ֆոնդ 57, ց. 5. գ. 677. թ. 9ա հարյուրավոր ստորագրություններ:



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵՒՐՈՊԵՈՑ

Մասնաւոր

Մանչեստր
Հոկտ. 27/9 Նոյ. 1912

ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ,
ԴԻԻԱՆԱՊԵՏ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ի Ա. Էջմիածին

Հայրենիքի հայոց ահռելի կացութիւնն արդէն յայտնի էր, իսկ այժմ կարելի է երևակայել, թէ՛ ներկայ պատերազմի մէջ թրքաց չարաչար պարտութեան պատճառաւ որքա՞ն ահաւոր աղէտք կսպառնան մեր հեգ հայրենակցաց. քանի որ ապացուցեալ ճշմարտութիւն է թէ՛ «արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս կոռիւն». մա՛նաւանդ երբ իրենց ճիրաններուն մէջ ունին անգէն անմեղ ժողովուրդներ՝ որոնց վրայ պիտի թափեն իրենց մթերեալ թոյներ: Ի՛նչ որ էլ լինի սակայն, մեր հաւատքն առ Աստուած հաստատուն է, թէ՛ իւր արդարութեան և երկայնմտութեան չափն այլևս անցած է և վերջապէս պիտի փայլատակէ իւր վրէժխնդրութիւնն: Թողլով սակայն սոյն խորհրդածութիւններն՝ անցնինք մեր ընկիւղին:

Թէպէտև նախ քան զսկզբնատրութիւն պատերազմին պահ մը լսուեցաւ թէ՛ Վեհ. Հայրապետն իւր լուրջ ուշադրութեան և հոգածութեան առարկայ ըրած է իւր հայրենաբնակ հօտին աղիողորմ վիճակն, սակայն արդիւնքի մասին տեղեկութիւն մը չունեցան Երուսաքնակ հայերն, որոնք, մանաւանդ Անգլիաբնակք իրաւամբ կը մտածեն, թէ՛ եթէ Թուրքիոյ բաժանումի մատնուելու ներկայ պատեհագոյն առիթէն ալ չօգտուելու լինի ազգըն, գէ՛թ հայրենիքի մէջ գտնուող քիւրաւոր հայոց ամէն կերպիւ խաղաղ և ապահով կեանք մը վարելու կատարեալ ապահովութիւնն հաստատապէս չերաշխաւորելով, այլևս կորսուած պէտք է համարիլ ազգն, մա՛նաւանդ

Մայր Հայրենիքին, և անոր վրայ կարդալ վերջին «Հոգւոցն» և «Անշարժ եղիցի»-ն:

Տեղոյս պատուաւոր լրջախոհ ազգայինք ոմանք խնդրեցին որ այս պարագային վրայ Վեհ. Հայրապետի խորին ուշադրութիւնն հրաւիրեմ մասնաւոր և ո՛չ պաշտօնական թղթով մը, նաև յայտնեմ, թէ՛ եթէ Ն. Ս. Օծոյթիւնն կը կարծէ կամ կը մտածէ իր հետաւեալ իմաստութեամբ թէ՛ Երոսլայի, մանաւանդ **Անգլիոյ** մէջ գտնուող հաշք կրնա՛ն որ և է բան մը ընել, և առ այս եթէ ունի ո՛ր և է հրաման կամ թելադրութիւն, թող բարեհաճի զեկուցանել ըստ այնմ վարուելու համար:

Ողջունի սիրոյ
մնամք աղօթակից
ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՓՈՍ ԻԻԹԻԻԾԵԱՆ

3. Գ.

Ի գիտութիւն կը հաղորդեմք թէ՛ սեպտ. 17/30-ին քաղաքիս **Աթենիումի** մէջ ընդ նախագահութեամբ մերով մեծ միթինկ տեղի ունեցաւ հայաքնակ բազում զաւառաց մէջ տիրող բարբարոսութեանց համար: Ըստ որոշմանն անոնք համախումբ ժողովոյ մի հեռագիր ուղղեցի Մեծ Եպարզոսին (պատճենն ալ Հայոց Ս. Պատրիարքին) բողոքելով հայրենիքի հայոց աղիողորմ վիճակի մասին: Հեռագիրն կը բաղկանար 130 բառէ. եզրակացութեամբ կը պահանջուէր վերջ տալ Սահմանադրութենէ ի վեր շարունակեալ **Համիդեան սիսթեմաթիք** ջարդերու և հաստատել երկրին մէջ հայոց կենաց, պատուոյ և բնէից ապահովութիւնը:

Մեծ Եպարզոսն Արտ. գործոց նախարար Նորատունկեան Էֆենդի և Լօնտօնի Օսմ. դեսպան Թէվֆիք փաշայի միջոցաւ պատասխանած էր, թէ՛ անմիջական ազդու միջոցներ ձեռք առնուած են Հայաստանի մէջ ապահովութիւն հաստատելու համար, ևն, ևն (Սովորական ստտ և կեղծ խոստումներ՝ որովք ցալսօր օրօր կարդացած և խաբած էին անոնք իսկ Մեծ պետութիւններն): Յետոյ խիստ ապահով աղբիւրէ իմացանք թէ՛ մեր բողոքն բաւական ազդեր է Բ. Դրան վրայ, կերևի շնորհիւ անոնք օրերու փափուկ կացութեան, և ինչ ինչ նկատումներով, որոց մին և գլխաւորն մեր թեմի Ամենայն Հայոց Հայրապետութեան ենթարկեալ լինելն է: Եւ սակայն մեր միթինկէն յետոյ շուտ վրայ հասաւ Պալքանեան պատերազմն և այժմ ձայնն թնդանօթիւնն է: Երանի՛ թէ աղբ. ձայնն հեգ հայոցս համար ևս փորկարար արդիւնք ունենար:

Չմոռնամ յայտնել, թէ՛ տեղոյս Օսմ. հիւպատոսն ըստ հրահանգի Լօնտօնի Օսմ. դեսպանին մի քանի պատուաւոր հայերով պաշտօնապէս այցելեց մեզ անձամբ լանձնելով պատասխանագիրն:

Գ.Ե. Ի.



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵՒՐՈՊԻՈՑ

Համար 2414
Մասնատր

Մանչեսթր
11/24 դեկտեմբեր. 1912

ԳԵՐԱՊԱՏԻ ԴԻԻԱՆԱՊԵՏԻ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. ԲԱԳՐԱՏ Ծ. ՎԱՐԴ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆԻ

Ի Ս. Էջմիածին

Ժամանակին ստանալով Ձեր նշանք. 8 ամսաթուով և թ. 1450—51 գրութիւններն փութացի ձեռնարկել ի գործ: Մանչեսթրէն երեք պատգամաւոր ընտրեցինք, որոնք Լօնտօն գնացին տեղւոյն մէրազնէից հետ համախորհուրդ գործելու համար. Լօնտօնցիք միաքանեցան Մանչեսթրցոց և անմիջապէս թէ՛ Մանչեսթրցոց և թէ՛ Լօնտօնցոց կողմանէ մէկ մէկ պատգամաւոր Լօնտօնէն անցած էին ի Փարիզ, ուր տեղի ազգայինք ևս միացած էին Անգղիաբնակ ազգայնոց: Նախորդ կիրակէ ժողովականք գումարուած էին յԱռաջնորդարանին Փարիզու և որոշած էին դիմել Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի, առաջարկելու համար որ ինքն ալ հարկ եղած աջակցութիւնն չզլանայ, բայց ահա նոյն միջոցին կը ժամանէ Վեմ. Կաթողիկոսի նոյնանպատակ մի կոնդակն առ նոյն Պօղոս փաշա, որ ընդունած է իրեն առաջարկեալ գործն:

Փարիզի մէջ ժողովն պատրաստուած լինելով Պետութեանց դրկութիւն աղերսագրոց պատճեններն դէռ երկու օր առաջ ստացանք զայնս, ինչպէս և Ձեր նշանք. 26 և թ. 1752 ծածկաբար մակագրեալ պաշտօնագիրն:


Արդէն ես ինքս մտադիր էի Լօնտօն իջնել և գործին մղում տալ կա-

րելի եղած միջոցներով, Վեհափառի հրամանն ալ կրկին կը պարտաւորէ զիս: Գրեցի հարկ եղածն Լոնտոնի Հոգաբարձութեան, որմէ ալսօր պատասխան ստացայ առ ժամս յետաձգել ուղեորութիւնս, որոյ պատճառն Երոպացոց ծննդեան տօնն է, գրեթէ մինչև յառաջիկայ երկուշաբթի բովանդակ Անգղիոյ մէջ գործառնութիւն դադարեալ են. Հաշտութեան խորհրդաժողովն երէկունէ դադրեցոյց գիտերն: Պօղոս փաշան ալ Լոնտոն եկած չէ տակաւին, հետևաբար յառաջիկայ շաբթու պիտի երթան Լոնտոն: Ծննդեան տօնի օրերէն յետոյ աղերսագրերն ալ պիտի պատրաստուին վաւելոյշ կերպիւ գրի մեքենական գործիներով, զորս ստորագրելով պիտի դրկեմք իրենց հասցէից:

Առ այժմ հաղորդելով զայսոսիկ ի գիտութիւն Նորին Սրբութեան, Լոնտոն գնալուս ի՛նչ կարևոր լուր որ ունենամք՝ կը փութամք տեղեկագրել:

Մնամք աղօթակից
առաջնորդ հայոց Երոպիոյ
ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ





ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵՒՐՈՊԻՈՑ
Թ. 2419

Լօմաօն. դեկտ. 20/2 յունուար 1913

ՊԱՏՃԷՆ
ԱՌ Ս. ՊԱՏՐԻԱՐԶՆ Կ. ՊՕԼՍՈՅ
ՈՒՂՂԵԱԼ ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՊԱՇՏՈՆԱԳՐՈՎ

ԱՄԵՆ. ՍՐԱՋԱՆ ԵՂԱՅՐ Ի ՔՐԻՍՏՈՍ

Կ. Պօլսոյ ազգային և երոպական թերթերէն կը տեղեկանանք, թէ՛ Օսմանեան կառավարութիւնն Հայաստանի ինչ ինչ նահանգաց մէջ կուգէ եղեր բարեկարգութիւններ մտցնել. և առ այս Մեծ Եպարգոսն ի խորհրդակցութիւն հրափրեր է նախկին Պատրիարք Օսմանեան Սրբազանը և որիշ պատուարժան ազգայիններ, ինչ որ զարմանք պատճառեց շատերու, քանի որ Թուրքիոյ համայն հայոց օրինաւոր Պատրիարքն իւր վարչութեան հետ պաշտօնի վրայ կը գտնուի և ազգովին շնորհակալութեան և գոհունակութեան արժանի կերպիւ կը գործէ: Բ. Դրան այս ընթացքն չգիտեմք թէ մինչև ո՞ր աստիճան անկեղծ մտածման արդիւնք է, որի մասին ավելորդ կը համարեմք ասկէ անէին գրել աստանօր՝ քանի որ մեր ներկա նամակն գրելնուս քո՛ւն նպատակն տարբեր է:

Յայտնի է արդէն Ձեր Ամենապատուութեան, թէ՛ Բ. Դոտն քազում տարիներէ ի վեր քանի՛ քանի՛ անգամներ մի և նոյն նպատակաւ ձեռնարկեր ըրած և խոստումներ շուայած է տեսականօրէն, սակայն գործնականապէս՝ ամէն անգամին ալ ամենափոքր քաղ միակ առած չէ դէպի բարեկարգութիւն, և, միշտ խնդիրն մնացած է միեւնոյն վիճակին մէջ, որոց հետևանքն եղած են յաճախ նորագոյն հալածանքներ և կոտորածներ, քանի որ բացայայտ ճշմարտութիւն է, թէ առանց եվրոպական պետութեանց հսկողութեան՝ բնաւ ճշանակութիւն չպիտի ունենայ Օսման. կառավարութեան ցոյց տուած դիտաւորութիւնն ի բարեփոխութիւն վիճակի Հայաստանի մեր թշուառ ժողովրդեան:

Եւ այս իսկ պատճառաւ է, որ Պերլինի դաշնագրոյն մէջ 61-րդ յօդուածն գոյութիւն ունեցաւ, իբրեւ միջազգային կարևոր հարցերէ մին, և հայերն զօրութեամբ այդ 61-րդ յօդուածին՝ իրաւունք ստացած են իրենց կենաց, պատուոյ և ընչից ապահովութիւնն միշտ, մա՛նաւանդ ի պատեն առիթս՝ խնդիր ընել թէ՛ Օսմանեան կառավարութեան, և թէ՛ երրոպեան միւս պետութեանց: Եւ նոյն 61-րդ յօդուածի կատարեալ գործադրութեան մէջ է հայկական տառապանաց վախճանն և նոր կեանքի մը ծնունդը: Պէ՛տք է ամէն կարելի եղած ջանքն ի գործ դնել և թախանձանօք խնդրել նոյն 61-րդ յօդուածն ստորագրող թէ՛ Օսմանեան և թէ՛ երրոպական միւս Մեծ պետութիւններէն՝ որպէս զի աշխարհի առջև հանդիսաւորապէս ստանձնած մարդասիրական պարտականութիւնն իրենց կատարեն, առաջինն գործադրելով իրեն վերաբերեալ պարտքն, և, միւսներն ալ իրենց հսկողութեան իրաւունքը:


Ասոր հակառակ ուրիշ կերպ վարմունք, կամ, տեսակ մը հաշուէարդարութիւն՝ ոչ միայն յո՛յժ անիմաստ, և մեզ հայոցս համար անմաստ մի բան պիտի լինի՝ ալև գուցէ նոր դուռներ պիտի բանայ ուրիշ մեծագոյն և անհաճոյ անտեղութեանց:

Ուստի, ամեն. եղբայր, մեր ժողովրդեան փափագն այն է, որ Զեր Բարձր Սրբազնութիւնն առանց Պերլինի դաշնագրութեանց 61-րդ յօդուածի մէջ գծուած մեր իրաւունքներէն շեղելու կամ տարբեր ուղղութեան հետեւելու՝ ուժով պնդէ և պահանջէ անոր տառացի գործադրութիւնը, ինչպէս որ մենք աստ բոլոր երրոպական պետութեանց և դահլիճներուն ուղղեալ մեր աղերսագրովք նո՛յնը խնդրեցինք միայն. նկատելով զայն բոլոր պետութեանց կողմանէ պաշտօնապէս հաստատեալ և ընկալեալ ամենեւն գորատոր խարխիս մը:

Օսմանեան կառավարութիւնն Հայաստանի բարեկարգութեան մասին լինքենէ ըրած նոր առաջարկովն և խոստումներովն, և, պատրիարքարանիդ ալ հաւան գտնուելովն՝ մի՛ գուցէ յառաջիկայ վեհաժողովին (թէպէտ որոշապէս յայտնի չէ թէ տեղի պիտի ունենա՞յ այն) զէնք մ'ունենայ ի ձեռին, ըսելով, թէ՛ «մենք հայոց հետ համաձայնած ենք...»: Այն պարագային ահռելի պիտի լինի յուսախաբութիւնն ազգին և ամէն անոնց՝ որք ամենուրեք յայտնի կամ գաղտնի անձնութիւնքար գործեցին ամէ՛ն զոհողութիւն ընելով թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս: Ասոնք ոչինչ. բայց Հայաստանի վիճակն գուցէ զգալի փոփոխութիւն մ'ալ չպիտի կրէ դէպի լաւն. քանի որ, իրա՛ւ, այսօր շա՛տ բաներ կը գրուին և կը խօսուին՝ սակայն դիւանագիտութիւնն... ո՛վ գիտէ թէ վաղուան համար ի՞նչ անակնկալներ կրնայ ծնանիլ...:

Մնամ

Գ. ԵՊՍ. ԻԻԹԻԻԾԵԱՆ



ԴՐՈՒԹԵՆԱԿԱՆ ԶԱՐԴԸ ԽԱՐԲԵՐՈՒՄՆ ՄԷՋ

Ծրագրուած, այո՛ տարիներ առաջ ծրագրուած հայաշինջ քաղաքականութիւնը դրութեանական կերպով գործադրուեցաւ Խարբերդին մէջ ինչպէս նաև Հայաստանի բոլոր նահանգներու մէջ: Մոնկոլին յատուկ աներեւակալելի խժոժութիւններով, եղեռներով և նախշիրներով խառն. ահաւասիկ եղանակները որք գործածուեցան Խարբերդին մէջ ջնջելու անմեղ հայերը իրենց բոլոր պարագաներով, իւրեղով անոնցմէ ինչք և պատիւ, կեանք և երջանկութիւն, կրօնքը և լեզուն....:

Առաջին քայլը տեղի ունեցաւ կրթական հաստատութիւնները քանդելու և փճացնելուն մէջ. գոցելով ազգային բոլոր դպրոցները, ինչպէս նաև ամերիկեանը, Եփրատ գոլէճը թէ դպրոցը և թէ աղջկանցը: Գոլէճները, վարժարանները ամէնքն ալ գոցելու հրաման ըրաւ կառավարութիւնը առարկելով «Համաճարակ հիւանդութիւնք կան» փուն և սնոտի փաստաբանութիւն. ցրուել տուաւ բոլոր աշակերտութիւնը շէնքերը վերածելով հիւանդանոցներու և զօրանոցներու: Դպրոցներու փակուիլը կ'ըն տեղի ունեցաւ 1915 Մարտի 28ին. Վարիչ մարմինները, Ամերիկեան Միսիոնարութիւնը կրկնակի դիմումներ ըրին, սակայն արդիւնքը բոլորովին պարապ. լսող չեղաւ....:

Սարիլին տեղի ունեցան կարգ մը տուներու խուզարկութիւնք ամբաստանուելով իբրև կուսակցականներ, սկսան փնտռել գրութիւնք և այդ առթիւ ձերբակալել ականատար անձինք: Բայց այս առթիւ ծեծ, չարչարանք կ'ըն չկար, եղածը բանտարկութիւնն էր սոսկ. Մայիս 1-ին սկսան ձերբակալել փրօֆէսօրները—Եփրատ գոլէճին—կրթական հաստատութեանց պատկանող անհատներ, հարուստներ. և նշանատր գրողներ, վարդապետներ և քահանաներ, որոնք որ նախապէս աչքի զարնուած էին: Մայիս 10-էն սկսաւ ծեծ, չարչարանք հետեւեալ կերպերով: Նախ սկսան ծեծել, լստոյ ծեծողները պալտել, քնեռել, գլուխները Մէքէնայից մէջտեղ դրնել և ճգմել. վերջին կերպը չարաչար կերպով գործադրուեցաւ Եփրատ գոլէճի փրօֆէսօրներու և ուրիշ նշանատր հայ մտաւորականներու վրայ, չմոռնամ ըսել թէ արքաններով սկսան նաև ոմանց եղունգները և մատները քակել, ձեռքերուն մէջտեղ քէզապստի լեցնել, վատել և տանջանքները այսպէս կրկնապատկել:

Տառապանքի այս շրջանին որ ատեն ժողովուրդը ծայր աստիճան

սկսած էր յուսահատիլ աներևակայելօրէն, անգույթ կառավարութիւնը Մաքսիմիլիանս խաղի մը սկսած «հեռագիր ունենք, չէզոքները պիտի արձայնենք, իսկ կուսակցականները պիտի թեթևօրէն պատժենք, ժողովուրդը գրգռուելու չէ», Վալիմ կանչելով հալոցս առաջնորդը Պսակ Ծ. վարդապետը, գերման Ծովէն Միսիոնարը Մր. Էյմանը, հայ աւետարանականաց հովիւը Վեր. Վարդան Ամիրխանեանը ասոնց բոլորին կը հաղորդէ իրեն եկած հեռագիրին պարունակութիւնը պատուիրելով հանդերձ այնքան հրամայական և իշխանական թօնով մը. «Եթէ ժողովուրդը կուզէ որ բանտի մէջ եղող չէզոքները շուտ արձակուած տեսնել, քովերնին եղած որևէ զէնք և ռազմամթերք շուտով մեզի յանձնելու են, անկէ վերջ հաւանական է որ բոլորն ալ ազատ արձակենք». ակնարկուած «բոլոր»ը կուսակցականներու ազատման հաւանականութիւնը կը ցուցնէ:

Հոգևոր պետերը գերման միսիոնարին հետ հաւատացած, այո՛ թուրքին յատուկ փառաբանական և քաղաքավարական կեղծ յարգանքներուն և խօսքերուն ասոնք սկսան կատարելաւ եռանդով քարոզել որ «զէնքերը կառավարութեան յանձնելու ենք, եթէ ոչ՝ մերիները բանտ պիտի մնան»: Գերման Միսիոնարը որն որ ժողովուրդի վրայ նախապէս լաւ ազդեցութիւն մը թողուցած էր, Վարդապետը իրենց եկեղեցիներու մէջ խօսած քարոզներովը կարողացան համոզուել և համոզել խեղճ ժողովուրդը թէ՛ «փրկութիւնը մեր բանտարկեալ եղբարց՝ զէնքերը յանձնելուն մէջ կը կայանայ». առանձին առանձին ժողովներով, այսպէս համոզվել խօսքերով ժողովուրդին մէջ այն հաւատքը ստեղծեցին թէ՛ խոհեմութիւնը զէնքեր յանձնելն է». Բողոքականաց երէցն ալ նոյն հաւատք ունենալով գիտելով միւսներու արարքներուն և կառավարութեան խոստումներուն, վստահած սա ալ սկսաւ քարոզել...:

Այս պարագային խորամանկ կառավարութիւնը յաջողեցաւ թշնամութիւն և դժգոհանք սերմանել ժողովրդեան մէջ կուսակցականները ոչ կուսակցականները և փոխադարձաբար սկսան զիրար խժրօնել, մեղադրել, որոն յաջորդեց կարգ մը անախորժ դէպքեր...: Քարոզներու արդիւնքը եղաւ զէնքերու յանձնումը, մերիներու յիմարաբար խաբուիլը, խեղճ, միամիտ առաջնորդը այնքան համոզուած թուրք պաշտօնէից խօսքերուն որը կակսի գիւղեր մարդ դրկել, նամակներ գրել որ ունեցածնին անշապաղ և առանց այլևայլի յանձնեն. միամիտ ժողովուրդը ինկոյն կը համակերպի: (Ստորագրեալս պաշտօնիս քերուով Կարմիր գիւղը կը գտնուէի, երբ Պրսակ վարդապետ ինծի ուղղած էր միևնոյն իմաստով նամակ մը, որուն հակառակը պատասխանեցի և քիչ մնաց որ... ես արդէն այդ օրէն փախըստական մը եղայ և ուր լինելս ոչ ոք գիտէր մէկէ մը ի գատ, որը ուտելիք կը հասցնէր ինծի): Այս բոլոր գործողութիւնները, լաւ ասած խաղերը տեղի ունեցան Մայիսի վերջերը և մինչև Յունիսի 10րդ օրը, որ ատեն արարուածը կը փոխի:

Զէնքերու յանձնելուն անմիջապէս յաջորդեց բանտի մէջ եղողներու արքարումը, որոց թիւը 1500—1600 կը լինէր և քաղաքի և շրջակայից սոսկալիօրէն պաշարումը. Խարբերդէն—Մեզրէ կէս ժամ կամ երեք քառորդ հեռաւորութեամբ տեղը երթնելութիւն դադրեցաւ դուրսերը տեսնող ունէ այդ մարդ անխնայ կը ձերբակալեն և կը ծեծեն, գլուխները, պէխները և կրծմականաց մօրութները կը փետեն ու...: Խժժողութիւնները աննկարագրելի են այլևս, տունէ տուն մինչ իսկ երթնելութիւն անկարելի է, կը լսենք որ բանտարկեալները գիշերները կը քշեն... (թուրքը որչա՛փ հաւատարիմ է իր խոստումներուն), Պսակ վարդապետը դիմում կը կատարէ և վերա-

դարձին վերջնականապես կը ձերբակալուի, տասնևհինգ ամօթի ծարաւ բանտը անցնելէն վերջ 900 (ին հարիւր) ինտելիգէնտներու հետ կաքսորուի արդէն ուժաւաստ եղած: Մարդիկ յակամէ յանուամէ կսկսին փնտրուիլ ըստ կառավարական տոմարին: Տեսէք որքա՛ն խորամանկութիւն:

Երբ այրերու ձերբակալումները խստութեամբ կը շարունակուէին, շըրջակայ գիւղերու բնակիչները բոլորովին ջարդուած էին, կանանց դիմումները գերման գոթո՞ւ Միսիոնարին մօտ՝ «Մեր էրիկներու արինթաթախ հագուստները դիտմամբ մեր դուռները կը բերեն ձգեն» խօսքերը Միսիոնար Սր. Էմանիւն գոթը չի շարժեր. «Չեմ հաւատար Զեր խօսքերուն, կառավարութիւնը մեզի վստահացուցած է թէ քսոր պիտի ըլլայ, բայց ոչ ջարդ»... յիմարի տրամաբանութիւն, խաբուելու քանհերորդ անգամն է արդեօք: Յունիսի 15էն սկսած ընդհանուր ժողովրդեան քսորումը, բանտէն կարգ մը անհատներ արձակուեցան մեծ կաշառքներով որ իրենց ընտանեաց հետը մեկնին, թաղէ թաղ սկսան պարպել, հանել Տիարալէքիւր և Մալաթիոյ գծով երկու ճամբու վրան լեռներ և գետեր, որպէսզի կու տան...: Այլևս թող Ամերիկեան քոնսօլը Սր. Տեպիսը, Ամերիկեան Միսիոնարութիւնը, եթէ խիղճ ունին գերման միսիոնարք և միսիոնարուհիք թող վկայեն իրենց աչքերով տեսածները, փախչողներու դէմ յանդիման իրենց ըրած պատմութիւնները, իրենք իրենց աչքերով տեսածները թող պատմեն աշխարհին ճշմարտութիւնը ցուցնելու թէ կարաւան կարաւան, խումբ խումբ հանուող անմեղ բնակչութիւնը ինչպէս ժամ ու կէս հեռաւորութեամբ Կէօլճիք ծովակին եզերքը, լեռներու մէջտեղերը, ինչպէ՛ս կը ջարդէին, կը կողպտէին, Մալաթիոյ ճամբու իզթլի ջուր ըստած տեղին մէջ, Եփրատ գետին մէջ ինչպէս դիակները լեցուած են, ինչպէս մաքուր ջուրը արեան փոխուած էր տառապանքի ալք շրջանին մէջ, ինչպէ՛ս հայուն գոյքերը կը խլեն քիւրդերը և ինչ եղանակներով կը փախցուին հայ կոյսերը, հոս կը թողում կարող գրիչներու որ իրենք պակասս լրացնեն:

Ճամբորդութեան մէջ ականատեսներ ինծի պատմած են՝ որք այժմ կայրին Տերսիսի շնորհիւ ազատուելով թէ ինչպէս չարասիրտ ժանդարմանները և քսորուածներ առաջնորդող զապետները ամէն օր նոր նոր խաբկանքներով կը համոզեն ժողովուրդը «հեռագիր եկած է, այլևս մնացողը ապահով Ուֆա պիտի հասցնենք»ի պէս համոզիչ խօսքերու տեղէ տեղ կը փոխադրեն միշտ օրէ օր պակսեցնելով... և ինչպէ՛ս էրիկներու առջև կիները կը բռնաբարեն, հայրերուն առջևը աղջիկները կուգեն...: Լսեցէք, մայրեր իրենց ձեռքերով կը կտրեն իրենց գեղանի աղջկանց մազեր երեսնին գշկոտտ, աղտ քսելով տգեղցնելու համար հայ կիները և հայ աղջիկները յօժարաբար ինքզինքնին գետերը կը ձգեն, ոմանք ալ բռնի կնութեան կառնուին և Խարբերդի և Մալաթիոյ մէջ 5000—6000 հայ աղջիկներ կա գեղեցիկ տեսակէն, որոնք ականաւայից կիներ են թուրք զապետներու, խօճաններու և ժանդարմներու Տիարալէքիւրի և Խարբերդի շրջանակի մէջ 3000էն աւելի ալ՝ 10—12 տարեկան մանչեր կան քիւրդերու և թուրքերու տունները որ ճամբաններ տեսած գթացած և քուլերնին առած են ու այժմ Մայրենի լեզունին խօսելը մոռցա՛ծ են: Աքսորանքը յուլարկաւորութեան փոխուած էր, առաջի օրէն Միսիոնարք և խելացիներ կռայեցին զայս սակայն ազատիլը և փախչիլ անկարելի էր, չորս կողմը պահնորդներ կային...: Քաղաքին մէջ համրուելիք աղջիկներ մնացին այն ալ թրքանալով և ամուսնանալով համակերպելով և ամէն մասամբ տուժելով...: Օգոստոսին սկսան շրջակայ գիւղերու եկեղեցիները և գերեզմանատունները

քակել, այսօր միայն խարբերողի մէջ Ամերիկեան միսիոնարութեան աչքին առջև չլանդուած կը կեանաւ Սք. Գևորգ եկեղեցին և հայ. Աւետ. եկեղեցին ու Մեգրէի մէջ ֆրայէ գերման Միսիոնարաց ի պատիւ երկու եկեղեցիներ առոնք բոլորն ալ հիւանդանոցներ ըրած են արդեօք իրենց պէտք գալու համար չեն քանդած, թէ օտարները կը խաբեն...: Տասնևութը ամիս խարբերողի և շրջակայք անցուցի պահուած կեանք մը. եօթը ամիս Ամերիկեան հիւանդանոցի մէջ իբրև հիւանդապահ. Նոյեմբերի 18րդ օրը Ռումելցիի Մէհմետ Ալիի, մելագեմի Էլի և Սրւանցի Մէհմետ Ռիզայի հետ ունեցած խօսակցութեան մը առթիւ «Պիշարէ Արսէն, Ձեր ազգին բնաջնջումը պիտի ըլլար պուկարական պատերազմին առնելը, սակայն չ'յաջողեցանք, յետոյ Սահմանադրութեան շատ քիչ մնաց որ յաջողէինք, բայց Անգլիայէն և Ռուսիայէն ու Ֆրանսայէն վախճանք, իսկ այժմ որ այս երէքն ալ մեր թշնամիներն են ու գերման հզօր պետութիւն ալ մեր կողմն է և ինք մեզի ազատութիւն տուաւ մեր ներքին գործերը անկախօրէն վարելու, ալ ի՞նչ կարգիլէր մեզ Ձեզ նման վատ ըմբոստ ազգ մը փճացնելու. Նուպար փաշան պէկլիկ կուգէր, թող գայ որ առնէ և տեսնէ... Արսէն, եթէ դուք խելացի ազգ լինէիք երբ Քաթիթիլասօնները ջնջուեցան, Ձեր ջնջումն ալ հասկընալու էիք»...: Նայեցէք որչափ առաջներ ծրագրուած էր դրութեանական այս ջարդը:

ԽԱՐԲԵՐՈՂԻ ԵՓՐԱՏ ԳՈՒԷԺԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ԾԵՄԱՐԱՆԻ ԾՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԷՆ
ԱՐՄԷՆ ԽԱԶԻԿԵԱՆ

Կարին

1916 Նոյեմ. 28

Գ—125 Թ. 13—14



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե

Վեհափառ Տէր,

Պատիւ ունեմ յարգանք զեկուցանել Ձեր Վեհափառութեան, որ ես եկել եմ Թիֆլիսից մի յատուկ միասիայով և յանձնարարութեամբ առ Ձերդ Վեհափառութիւնը, Հայ ժողովրդական կուսակցութեան Կենտրոնական կոմիտէտի, հայ առևտրական և ֆինանսական դասակարգերի ներկայացուցիչների կողմից:

Իմ միասիան վերաբերում է այն խնդրին, թէ ինչ ենք և միջոց գտնել փրկելու համար թիրքաց Հայաստանի և Անդրկովկասի հայ ժողովուրդը այն վերահաս վտանգից, կոտորածների և ջարդերի վտանգից, որ առաջ է եկել վերջին աղետալի դէպքերի, մանաւանդ Էրզրումի գրաման հետևանքով: Ընդհանուր համոզմունք է, որ թիրքական զօրքերը կարող են խուժել Անդրկովկասի սահմաններից ներս, գրաւել մեր երկիրը, քանի որ մեր կողմից չէ կարող լինել զօրեղ դիմադրութիւն այն պատճառով, որ ռուսական զօրք չը կայ. մեր ազգային զօրամասերը դեռ լաւ և բաւականաչափ մեծ թուով չեն կազմակերպուած և երբ թիրքերը գրաւեն մեր երկիրը, անկասկած, կը կազմակերպեն ջարդեր: Եւ նոյն իսկ այն դէպքում, եթէ Անդրկովկասը չը գրաւէ, թիրքերի ձեռքով, և կնքէ հաշտութիւն 1914 թ. սահմանների շրջանում, ինչպէս ծրագրուած է, թիրք կառավարութիւնը անկասկած, ջարդեր կըղղայ Հայաստանի մնացորդ հայ ժողովուրդը:

Ապասել որևէ օգնութեան դրսից, օրինակ, անգլիացիներից, տեղիք չունենք, որովհետև այդ օգնութիւնը եթէ նոյն իսկ լինի շատ ուշ, կարող է հասնել, երբ արդէն ամէն ինչ վերջացած կը լինի: Երկրի ներսում մեր հարևան վրացիներից նոյնպէս որևէ օգնութիւն սպասել չենք կարող, նախ, որովհետև նրանք ոչ մի րեալ ոչ չունեն, երկրորդ, որովհետև նրանց երկրին ևս վտանգ է սպառնում: Գալով մեր երկրի թիրքերին կամ թաթարներին, նրանց վերաբերմունքը և դիրքը կարոտ չէ որևէ բացատրութեան:

Արդ, իրերի այդ կատաստրոֆային վիճակին մէջ, պէտք է գտնել մի ոյժ, հեղինակութիւն, որ կարողանայ զսպել թիրքերին, ազդել նրանց վրա, որ նրանք կոտորածներ չը սարքեն և ջարդեր չը կազմակերպեն: Այդ ոյժը, այդ հեղինակութիւնը Թիւրքիայի համար կարող է լինել թիրքերի համար միայն և եթէ Գերմանիան, գերմանական կայսրը:

Եւ մեր կարծիքն է, որ մեր ազգի ներկայ անելանելի կացութեան մէջ, բնաջնջումից փրկելու միակ միջոցը—Գերմանիայի և գերմանական կայսրի միջնորդութեան դիմելն է, իբրև վերջին միջոց, որովհետև թէև Գերմանիան Թիւրքիայի դաշնակիցն է, բայց նա քրիստոնէայ և քաղաքակիրթ պետու-

թիւն է և մենք հայերս իսկապէս Գերմանիայի դէմ ոչինչ չունենք և եթէ պատերազմել ենք նրա դէմ, պատերազմել ենք իբրև հպատակներ Ռուսաստանի և ոչ լատկապէս իբրև հայ ազգ: Եթէ Անդրկովկասին վիճակված է ընկնել վայրագ և բարբարոս թիրապետութեան ներքոյ, եթէ Հայաստանը դատապարտված է նորից մնալ թիրաքական անազորոյն լծի տակ, հարկաւարտիկ անելի լաւ է որ նրանք ընկնեն Գերմանիայի տիրապետութեան կամ սրբաւնկոտութեան ներքոյ:

Սակայն ո՛վ իրաւունք ունի և ձեռնհասութիւն ներկայումս յանուն ամբողջ հայ ազգի դիմել Գերմանիայի միջնորդութեան, որպէսզի նրա ձայնը և դիմումը լսելի լինի: Մենք գտնում ենք որ այդ իրաւասութիւնը և ձեռնհասութիւնը պատկանում է միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին իբրև Հովուապետի որ ունի ամենայն իրաւունք իր վտանգեալ հօտի փրկութեան համար յարուցանել ամէն տեսակ միջնորդութիւններ պետութիւնների առաջ: Եւ վերջապէս Գերմանիան արդէն պաշտօնապէս ճանաչել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազգային ներկայացուցչութեան իրաւունքը այն օրից, երբ նա ընդունել է Պօղոս Նուպար փաշայի պաշտօնական պատուիրակութեան հանգամանքը: Դժուար թէ գերմանական կառաւարութիւնը ընդունէ ուրիշ որեւէ մարմնի դիմումը իբրև հայ ժողովրդի ներկայացուցչի, բայցի որ հայ ազգը ներկայումս, բացի Էջմիածնի ընդհանրական և ազգընտիր Հայրապետութիւնից չունի մի որեւէ այլ ներկայացուցիչ պաշտօնապէս ճանաչված ամենքից:

Այս նկատումներով, ես ունեմ յանձնարարութիւն դիմել Ձեր Վեհափառութեան, որ Ձեր Հայրապետութեան առաջին օրերից իսկ ստանձնել էք Հայկական Մեծ Դատի պաշտպանութիւնը և ղեկավարութիւնը և հրաւիրել Ձեր բարձր ուշադրութիւնը այն հանգամանքի վրայ, որ ամէն րոպէ կարող է ծագել անհրաժեշտութիւնը ուղարկել մի պատգամաւորութիւն գերմանական ձեռնհաս իշխանութիւնների մօտ և նրանց միջոցով խնդրել գերմանական կայսրի միջնորդութիւնը՝ ազդելու Թիւրքիայի վրայ և թող չը տալու հայերի կոտորած և նոյն իսկ, եթէ հարկը պահանջէ, խնդրել Գերմանիայի հովանաւորութիւնը Հայաստանի վրայ: Մեր կարծիքով, պատգամաւորութիւնը պէտք է բաղկացած լինի երկու կամ մի գերմանագետ և ուսեալ եւ պիսկոպոսից և մի աշխարհականից, որոնց ընտրութիւնը, անշուշտ, կախված է Ձեր Վեհափառութիւնից: Մեր կարծիքով, աշխարհական պատգամաւորը կարող է լինել պ. Մ. Պատաւանեանը: Պատգամաւորութիւնը պէտք է Թիֆլիսում ամէն րոպէ պատրաստ լինէ, որպէս զի պահանջեալ րոպէին, մեկնէ իր միասիւս կատարելու: Ձեր Վեհափառութեան կողմից նշանակված եւ պիսկոպոսը, գնալով Թիֆլիս ինձ հետ, կունենայ անհրաժեշտ խորհրդակցութիւն ում հետ հարկաւոր է և վերջնական արդիւնքը կը գեկուցանէ Ձեր Վեհափառութեան:

Խորին յարգանքով և ակնածութեամբ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Փոխ նախագահ Կենտրոնական կոմիտէի հայ ժողովրդական կուսակցութեան և խմբագիր «Մշակ» թերթի)

Էջմիածին

23 Մարտ. 1918 թ.

Ֆ. 57, ց. 5, գ. 176, թ. 1, 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ
ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻՆ

ՆՈՐԻՆ ՎԱՅՄԱՓԱՅԼՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՆՈՒԲԱՐ ԼԻԱԶՈՐԻ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Ձերդ Վսեմափայլություն,

Կովկասյան Հայաստանի Հանրապետական կառավարության նախագահությամբ Պ. Ավետիս ԱՀԱՐՈՆՅԱՆԻ մի պատվիրակություն է ուղարկվում համայն պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների առջև, ինչպես և առաջին միջազգային կոնգրեսում Ձերդ Վսեմափայլության հետ միասին և Միախորհուրդ հայ ժողովրդի դատը իր ամբողջական ըմբռնումով պաշտպանելու և նրա արմատական լուծումը վստահելու՝ համաձայն հիշյալ պետությունների հայտարարած ազգերի ազատագրության բարձր ու արդար սկզբունքների: Իրագեկ առնելով Ձեր Վսեմափայլության որ Կովկասյան Հայաստանի այս պատվիրակությունը մեր Հայրապետական հաճությունն ունի, ուրախ ենք, որ այս պատվիրակության, ըստ էականին համապատասխան է Ձերդ Վսեմափայլության արտահայտած ցանկությանն ևս: Եվ քանի որ համաձայն հայ ժողովրդի գերագույն նպատակը մեկ է և անբաժան, մենք լիափութ ենք, որ թե Ձերդ Վսեմափայլությունը և թե մենք Պ. Ա. Ահարոնյան ու պատվիրակության մյուս անդամները համերաշխ ու համախոհ գործունեության, ընդհանուր և անխախտ հիմունքներով — հայ ազգի արդարագույն դատը հզորապես կպաշտպանվի և նրա իրավական ու քաղաքական լուծումով երջանկությանն ուր դարագլուխ կբացվի ազատագրյալ հայ հայրենիքի և իմ սիրեցյալ գավակների համար: Ի նկատի առնելով, որ երկար ժամանակից ի վեր ոչ մի տեղեկություն չունենք Ձերդ Վսեմափայլությունից և մենք ևս անկարող գտնվեցանք, քաղաքական պարագաների շնորհիվ, հաղորդակից առնել մեր կացության և դրության հանձնարարած ենք Պ. Ա. Ահարոնյանին քանիվ բերանով լրացնել այդ պակասը:

Հայրապետական մեր լիազոր և սիրազեղ օրհնությունը առաքելով առ Ձերդ Վսեմափայլությունը, Գերմանիա կողարկենք առ Տերն ամենայն Բարյաց առաջնորդել զհոգի Ձեր խոհակունի, որպես և պատգամավորաց,


ի բարին համրակում: Օրհնելով զԶեզ կամք մշտական սիրով առ հոգևոր
որդիդ մեր սիրեցյալ՝

(ստորագ. ԳԵՎՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ)

21 Նոյեմբ. 4 դեկտ. 1918 թ.

ՀԽՍՀ ԳԱՊԿԱ Հիմք՝ ֆունդ 57, ցուցակ 5, գործ 94





ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ,
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
№ 149

14 ՅՈՒՆԻՍ 1919

ՎԵՀԱՓԱՌ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ

Որդիական բերկրութեամբ ընկալեալ և ընթերցեալ զպատճէն սրբատառ կոնդակին, գտուեալն ի 1/14 փետրվարի 1919 ամի, գոհացաք զՏէառնէ վասն քաջառողջ կենաց Մեծի Հայրապետիդ և պայծառ շինութեան Առաքելական Մայր Աթոռոյս Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ:

Ապաքէն, ամենայն անցք բազմահնար տանջանացն որք անցին ի վերայ սիրեցեալ ազգին մերոյ, մատնեցին զնա ի հուր և ի սուր և ի բոլս անհնարին փորձութեանց: Գիտակ եմք և մեք զի փափուկ յոյզք զգացմանց հայրական սրտին Ձերոյ բազում անգամ ընկղմեցին զՀայրդ Հոգևոր ի կոծ սգոյ և յարտասուս դառնութեան ընդ անօրինակ կործանումն ժողովրդեան մերոյ:

Այլ սակաւն քաղցր է մեզ լինել խրախակից ընդ Վեհափառութեան Ձեր, զի բարեբաստ իրադարձութիւնք աշխարհաւոր պատերազմին յոյս մեծ և գերահրաշ ծագեցին յաչս տառապեալ և ճուազեալ ազգին մերոյ, և ակն ունիմք ի մոտոյ ի բաց ընկենոյ զլուծ անըմբերելի գերութեան անգգամ և այլակրօն ազին, որոյ վասն գոգցես եկեալ հասեալ կայ ի կատարումն բանն մարգարէական թէ՛ «Աստուած մախ յիմարեցուցանէ և ապա կորուսանէ»:

Մանրամասնեալ տեղեկագրութիւնք մեր զսոցին եղելոց իրացն, յընթացս քառամեայ պատերազմին, այն է՝ զտարագրութենէ, զկոտորածիցն, զահագնալոր եղեռանէ, որ ի բարբարոս թրքաց, զբազմաշարշար մահատակութենէ հոգևորական դասուն, և Հովուացն Հօտին և Եկեղեցոյս, զամենայն ցաւազին իրագործութիւնքս այսոքիկ կարգաւորութեամբ և հաւաստեալ, վաղուց ի գիր առեալ և ստաքեալ է մեր առ Վեհ. Հայրապետդ Հայոց. ուստի ոչ կամիմք միւսանգամ երկրորդել զնոսա:

Բաց աստի, Ս. Օծութիւն Ձեր յատուկ իմն հոգածութիւն ցուցեալ ի վերայ առաքելական և պատրիարքական Աթոռոյն Ս. Երուսաղէմի, կամի ստոյգ ինչ գիտել զայժմու կացութենէ մորա, թէ որո՞ց ի ձեռս կայ վարչականին իշխանութիւն: Յաղագս պատերազմական գործողութեանց խափանեալ գոլով

ամենայն երթևեկք և թղթակցությունք մեք ևս ոչինչ ստուգութեամբ գիտեմք զորպիսութենէ վարչական կազմութեան Ս. Ուխտին Երուսաղէմի, միայն ի լրոյ և ի պատահական ուղևորաց քաղեալ տեղեկութիւն կցկտորս, գիտեմք զի վանքն հայոց գտանի ընդ հովանաւորութեամբ անգղիական մեծափառ պետութեան, որ մասնաւոր իմն խնամատարութեամբ հոգայ զպէտս և զկարիս Միաբանութեան և ուխտին: Յորժամ հնար լիցի ընդ հուպ ընդունիլ տեղեկութիւնս կարևորս զԵրուսաղէմէ, անտարակոյս փութալոց եմք սուսջի առնել զնոսա Վեհ. Հայրապետիդ ի գիտութիւն: Իսկ վասն շփոթութեանց պատերազմին և քաղաքական յեղեղմանց, զխնդիր եպիսկոպոսական ձեռնադրութեան թողոք ի պատշաճ ժամանակի, ըստ բարեհաճ կամաց Ս. Օծութեան Զերոյ:

Խնդրելով զհայրական օրհնությունն Մեծի Հայրապետիդ ի վերայ ազգին Հայոց առ ի լրումն ըղձից և ի մխիթարութիւն բազմամեայ տառապանաց մերոց:

Մատչիմք ի համբոյր Օծեալ Աջոյ Վեհի Տեսունդ
և մնամք խ. որդի Զեր

ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅՈՑ
ԶԱԻՆՆ ԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ

Յ. Գ. Ի վերջին պահու ընկալեալ տեղեկագիր մի ի Ս. Երուսաղէմէ, արժան դատեցաք սուաքել զպատճենն Վեհ. Հայրապետիդ:

Ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 1—2





ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՆ ՊԱՏՐԻԱՐԶ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

Մեր քաջարի զինուորական, զերապատիւ սուաջնորդներին, վարդապետներին և համայն քահանայից դասին, բանիմաց մտաւորականներին, քաղաքացիներին, ժրաջան բանորներին, գիտականներին և արհեստավորներին և առհասարակ Հայաստանի հանրապետութեան քաղաքացիներին ամեն սեռի և հասակի, մեծերին և փոքրերին Մայր Աթոռիս հարազատներին, հայապետական ողջոյն և օրհնութիւն:

Աշխարհաստան պատերազմի ընթացքում մեծամեծ զոհեր տւիր դու, հայ ժողովուրդ. հարիւր հազարները քեզնից բնաւեր եղան և հարիւր հազարաւորներ, ժողովուրդ և հոգևորականութիւն, իրենց անմեղ արեամբ ներկեցին հայրենի երկրի քար ու հողը: Լաւագոյն զաւակներդ տարագրեցան և սրախողխող եղան և Հայրենիքի ազատութեան տենչը վերջին շնչի հետ քեզ աւանդեցին. նոքա գերեզմանի իսկ չարժանացան, քանի որ քո գեղեցիկ հայրենիքը ինքնին մի մեծ գերեզմանոց է, ուր դեռ սաւառնում է հայրենի երկնականարում մահատակածների անմահ հոգիները:

Նոքա սպասում են Ձեզ, սպասում են, որ գնաք և հանգիստ տաք նոցա ոսկորներին, որպէս զի նոցա տանջւած հոգիները խաղաղութիւն գտնեն յաիտենականութեան գրկում:

Մեր բիրաւոր մահատակները մեռան հրի և սրի տակ, քայց բոլորն էլ շնչերն աւանդեցին մի գաղափարի յուսով տոգորւած—հայրենիքի ազատութեան գաղափարի: Չկար նոցա մէջ ոչ հրէայ և ոչ հեթանոս, բոլորը

մէկ էին, մի հոգի և մի շունչ, մի գաղափարի շուրջը միացած և ի կենդանութեան և բարբարոս սրի հարածների տակ շունչերը փչելիս:

Մենք որ ապրել և ապրում ենք հայրենիքի միութեան և ազատութեան յոյսով, այսօր, հայ կեանքի վերածնութեան զարման արշալոյսի առկայծման օրերին վշտով տեսնում ենք, թէ ինչպէս մոռացել ենք մի ընդհանուր լեզուն և նպատակը, հայ կեանքի շարժող անիւի տակ, տեսնում ենք, թէ ինչպէս անյայտ, անորոշ, մշուշապատ գաղափարներով տարած մարդիկ փոսեր են փորում: Միացեալ և անկախ հայրենիքին ծանր վտանգներ սպառնացող ներկայ օրերում փոխանակ մի ընդհանուր գործի շուրջը համախմբելու, մարդիկ անհատական և խմբական ջլատիչ գործողութիւնների են դիմում, հայրենի մարդ անխարդախ մասնագիտութեան հասցնելու ծանր աշխատանքների այս դառն օրերում:

Հայ ժողովուրդ, հայ մտաւորական, հայ մշակ և գիտացի, հայ արհեստաւոր և չաղաքացի զգաստացիր միութիւնն ու համագործակցութիւնը քեզ ճամբայ ընտրիր, համախմբիր օրինասահման քո կառավարութեան՝ Հայաստանի հանրապետութեան կառավարութեան շուրջը: Զգաստ եղիր քո գիտակցութեամբ և քո քայլերիդ հաստատութեան մէջ, չափաւոր եղիր քո պահանջների հանդէպ, և կառավարութեան հետ քո միութեամբդ ձգտիր հասնել այն օրին, երբ դու քո ջանքերով տէր կդառնաս քո հայրենի հողին և ջրին, քո ամբողջական հայրենիքին: Ոչ թէ միայն յուսով ապրիր, այլ և աշխատանքով հասիր այդ օրին՝ քո ձեռքով քու բախտն ու վիճակը տնօրինելու օրին:

Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, նոքա, որոնք չտեսնողս են ձևանում, որ մեր տան մէջ մեր դէմ դաւեր են լարում պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում հայաջիւնջ ծրագիրների քալ առ քալ և հետևողական իրագործումը, զգո՛ւմ են, թէ ի՞նչ պատասխանատւութիւն է ծանրանում նոցա հանդէպ պատմութեան առաջ: Այս թուէիս, երբ ամենքիս պարտականութիւնն է համախմբել ոչ միայն հայրենիքի պահպանութեան և վերաշինութեան գործի շուրջը, այլ նախանշանաւ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը պահպանելու դժարին աշխատանքի շուրջը, ցաւալի է տեսնել, ներքին երկպառակցութիւններ:

Մենք, ինչպէս և մեր երջանկայիշատակ մախնիքները, որ աշխատանք ենք թափել տաճկահայ դատի համար, լաւ օրերի յոյսի ակնկալութեամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ թուականներին, և երբ վտանգւած ենք տեսնում հայրենիքի միութեան գործը, բայց նախանշանաւ հայ սզգի ֆիզիքական գոյութեան ճգնաժամային գործը, իբր ընդհանրական Հայրապետ մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասե՛նք օրհասական թուականներին հայրական խրատով դիմել բոլորին և զգաստութեան կոչ անել—Հայ ժողովուրդ, համախմբիր քո հայրենի հանրապետութեան պահպանութեան գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան միակ ճանապարհը:

Մենք հաւատում ենք հայ ժողովրդի իմաստութեանը և առողջ բնագրին. Մենք հաւատում ենք, որ հայրենիքի միութեան, ազատութեան և շինութեան ճամբի վրա առաջ եկած արգելքներն ու դժարութիւնները կվերանան, բոլորքս առաջ կխաղաղունեն և ամենքը մի խօսք և մի հոգի կդառնան ընդհանուր գործի ճամբին: Վտանգը և խիստ ծանր վտանգը

ձևը դռանն է, հայ ժողովուրդ, զգուշ եղիր և պատմության առաջ ծանր
պատասխանատվության քեռի տակ մի ընկնիր: Ամեն:

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 14 մայիսի 1920 ամի

Եւ ըստ Տոմարիս ԹՅԿԹ.


Ի Հայրապետության Մերոյ Թ. ամի

Սյրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 276





ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՊԱՐՈՆ
ՀԱՄԱԶԱՍՊ ՕՀԱՆԶԱՆՅԱՆԻՆ

Ի սրտե փափագող իմ սիրեցյալ ազգիս հերջանկության և իմ պանծալի հայրենիքի և Պետության բարգավաճման և հարաբերության, ես շարունակ աղոթում էի, որ Աստված ինձ արժանացներ տեսնել իմ հայրենիքի ազատությունը, անկախությունը և միությունը: Այժմ դաշնագրի ստորագրությամբ մեծ Հայաստանի լրացման ակտը կատարված համարելով ինքս անցյալ օգոստոսի 29-ին Ս. Աստվածածնի վերափոխման օրը, հայոց Մայր աթոռի հնադարյան Ս. Էջմիածնի տաճարում, անձամբ մատուցի Ս. պատարագ, օրհնեցի և սրբազործեցի անկախ, միացյալ և մեծ Հայաստանի տոհմը, որից հետո Էջմիածնի միաբանության և բազմախումբ հասարակության ներկայության Մայր Տաճարի գավթում կատարեցի մատուցանք մեր հայրենիքի բարգավաճման և Հանրապետության հարատևության համար:

Եվ որպեսզի լիակատար կատարած լինի Հայոց Հայրապետը յուր պարտքը դեպի հայրենիք ես սրանով Մայր աթոռ Ս. Էջմիածնի կողմից տալիս եմ Հայաստանի փոխառության ֆոնդին մեկ միլիոն (1000000) ռուբլի, խնդրելով Ձերդ գերազանցության ուղարկել Ձեր կողմից վստահելի մեկին այստեղ, հիշյալ գումարը Ձեզ հասցնելու:

Աղոթարար՝

ԳԵՎՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յ-ը ստպտեմբերի 1920 թ.

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

№ 486

ՀԽԱՀ ԿՊԿԱ Հիմք՝ ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 34, թ. 13



ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

Հայրենիքի հարազատ զաւակներին, մեր քաջարի զինորականներին,
քաղաքացիներին, և զիւղացիներին, Միացեալ, Ազատ և մեծ Հայաստանի
համայն ժառանգներին նուիրում ենք մեր Հայրապետական ողջոյն և օրհ-
նութիւն:

Ս Ի Ր Ե Լ Ի Բ.

Հայրենիքի պաշտօն հորիզոնը նորից մթնեց, խաղաղ կեանքը նորից
խանգարուեց. հայ արիւնաքամ ժողովուրդը սահմանների վրայ տեղահան
բաց երկնքի տակն է մնացեր. մեր սահմանների վերայ նորից գոռում են
թնդանօթներն, դարձեալ երկու տարի առաջւայ մղձաւանջը տիրեր է ամե-
նուրեք և ամենքի քերնից լսում է «գալիս է թշնամին»: Այո, Հայոց ժողո-
վուրդ, գալիս է թշնամին, անգութ թշնամին, նա արդէն մեր դռան, մեր
դէմ կանգնած է և իւր վերջին ուժերը հաւաքած յուսահատ կոխ է մղում և
ուզում է մեզ բոլորովին տանից տեղից, հայրենիքից և ազատութիւնից
զրկել և Իսրայելի նման մեր ոսկորներ անապատի մէջ ցիր ու ցան անել:
Ինչ եւ մտածում դու անել, կուե՞լ քաջաբար և մեռնել հերոսաբար, թէ յա-
ւիտենական ստրուկ դառնալ, կամ պարանոցդ թշնամու արի առաջ պարզել
և ոչնչանալ: Հեռո՛ւ հեռո՛ւ քեզանից, այդ ինքնակործան միտքը: Եթէ քեզ
համար թանկ է հայրենիք. եթէ դու սիրում ես ազատ ապրել. եթէ քեզ հա-
մար նուիրական և սուրբ է հայի անունը, պատիւը, հայրերիդ ու պապերիդ.

արիւնով ներկած եկեղեցին, ընտանեկան սրբութիւնը և օջախը, ապա ժամանակ է որ դու գէնք ձեռքիդ պաշտպան հանդիսանաւ փրանգում հայրենիքիդ:

Հայ Զօրապետներ, յիշեցէք հայրենիքի և եկեղեցու պաշտպան Ս. Վարդանէին, վերցրէք ձեր գլխարկներ, խաչակնքեցէք ձեզ յանուն հայրենիքի և սուրբ ձեռքի՛ն խոյացէք արծօրէն թշնամու վերայ և թող ձեր սպանկոյտը և քաջարի զինուոր ձեր յետևից քաղէների մման հետևեն ձեզ: Երկու տարւայ կ'աւնքը մեզ սովորեցրեց, որ մենք պետք է պաշտպանենք մեր հայրենիքը, օտարը մեզ չօգնեց և չի օգնելու: Հայ քաջարի զինուոր, դու քո քաջութեամբ և անվեհերութեամբ աշխարհք զարմացիր, հաւաքիր ուժերդ վերջին անգամ, տուր միանգամ էլ քո մահացու հարուածը հայրենիքի և հայի ազատութիւնը ջնջել ցանկացող անողորմ թշնամուն: Հաւատա և հաւատա թէ քո այդ վերջին հարուածով յաիտեանս կը ջախջախես թշնամուն անկանգուն կերպով որովհետև սա նորա վերջին յուսահատական կոիւն է, կամ ոչնչանալ յաիտեան և կամ ոչնչացնել քեզ:

Հայոց Հայրապետ, ձեզ է ողորմ իւր խօսքը մեծ հայաստանցիներ, Կարմեցի, Մշեցի, Սասունցի քաջեր և դուք Վասպուրական աշխարհի Մուկաց, Ծատակի, Ռշտունեաց և Խիզանի առիծներ, ելէք. ելէք, վերցրէք ձեր սուրն ու հրացան վազէք դէպի կոռի դաշտը, հանդէս եկէք ձեր բազուկներով և սրերով ձեր սուխ քրդերի դէմ, ցոյց տւէք, որ դուք դեռ կաք ու չէք մեռեր:

Գնացէք կոռեցէք քաջաբար և ձեր սրերով մաքրեցէք ձեր ճանապարհն դէպի ձեր մոխրացեալ վաթանք Մուշն ու Սասուն, դէպի Ս. Կարապետն ու Ախթամար: Իսկ դուք Արարատեան աշխարհի հարազատներ, Վաղարշապատի, Օշականի, Աշտարակի, Սարգարապատի, Ապարանի, Ծիրակի, Ծաղկաձորի և Գեղարքունեաց գաւակներ. թողէք ծերերին, ձեր մայրերին և քոյրերին ձեր տնային աշխատանքներն, ձեր ազատութեան վստահ է պատմում, թո՛ւք դէպի սահմանագլուխներ, յիշեցէք Ջէյլան ու Սարտարաբատ, որտեղ ցոյց տուիք ձեր քաջութիւնը, որտեղից թշնամուն հալածական փախցրիք. ելէք ի հանդէս. ներքին թշնամիները մաքրեցիր, մաքրիր քաջաբար և արտաքին թշնամուդ որպէս զի Մասիսի գլխին տընկումս հալկական դրօշակը անասան մնայ:

Ելէք և դուք հայոց փոքրիկ հօտի, փոքր հովիւներ, ելէք հայ ուխտապահ երեցներ. հարէք եկեղեցու զանգակներ. վերցրէք ձեր խաչն Ղևոնդեանց մման և մտէք հայ բանակի շարքերը. խրախուսեցէք ձեր զաւակներին, հայ քաջարի զինուորի՛ն, թող տեսնի նա իւր կողքին իւր հարազատին և ոգևորուի հայրենիքի և սրբութեանց սիրովն ու կրակովն. ելէք և կատարեցէք ձեր ուխտն ու պարտքը:

Ես հաւատում եմ, իմ սիրելի ժողովուրդ քո քաջութեան, ես հաւատում եմ քո անշեղ հարուածին. ես հաւատում եմ Հայաստանի հզօր Աստուծուն և նորա սքանչելիքներին. նա որ տուեց ուժ ու կարողութիւն մեր մի բուն քաջերին, երկու տարի անընդհատ հարուածելու հայրենիքի և եկեղեցու թշնամուն. նա այս անգամ ևս կը տայ հայրենիքի քաջերին, փառաւոր յաղթանակը և խրոխտացած թշնամուն խորտակումս ցիր ու ցան կը հալածէ:

Գնա՛, հայ ժողովուրդ, գնա հաւատով դէպի մարտի դաշտը, քեզ օգ-

Մական Փրկչի Ս. խաչը, քեզ պահապան մեր Ս. Լուսաւորչի հօր Աջը և
քեզ ուղեկից Հայոց Հայրապետի աղօթքն ու արտասուքը:


ԳԷՈՐԳ Ե.


Կաթողիկոս ամենայն Հայոց

յ2 Հոկտեմբերի 1920 ամի եւ ըստ
տոմարիս ՌՅՀ. ի Հայրապետու-
թեան մերում թ. ամի յԱրարատ-
եան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.

Թ. 553

Ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 52





ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուղարկել է Բաթում Մ. Պապաջանյանի և Ալ. Խատիսյանի անունով հետևյալ հեռագիրը մայիսի 16-ին:

Կոչելով Աստծո օրհնությունը հաշտարար պատվիրակության գումարման վրա և աղոթելով Ամենաբարձրյալին արդյունավետ գործունեության համար և ցանկանալով բարի սկզբունքի ելք Կովկասի ապագա բարեկեցության համար, առաքելով հաշտարար պատվիրակության բոլոր անդամներին, և կողմերի ներկայացուցիչներին մեր Հայրապետական օրհնությունը, խնդրում եմ ամենքին ներկա դեպքերի և պատերազմական գործողությունների ժամանակ պաշտպանել ամբողջ Կովկասի խաղաղ ազգաբնակչությունը, ինչպես և նաև պատերազմական գործողությունների շրջանում և այլ վայրերում գտնվող հայ ժողովուրդը կոտորածներից, նաև հինգալորց պատմական Էջմիածնի վանքը ու մեր նախնիների գահը, բոլոր նվիրական հուշարձաններով պահպանել ավերումից ու թալանից:

ԳԵՎՈՐԳ 5-ՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՀԽՍՀ ՊՊԿԱ Հիմք՝ ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 94:

